Հաստատում եմ

Հյուսիսային համալսարանի

Ռեկտոր՝ Մ.Մակիչյան

11.03.2020 թ. (արձ. N 35)

Կարգ

Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի ուսանողների գիտելիքների ընթացիկ, ամփոփիչ ստուգման, գնահատման

2020 թ.

1.Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կարգավորում է ուսանողների գիտելիքների ընթացիկ, ամփոփիչ ստուգման, , գնահատման գործընթացը:
2. Սույն կարգը տնօրենի ներկայացմամբ հաստատում է մանկավարժական խորհուրդը:
3.Կարգը կազմելիս հիմք են ընդունվել ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները , Հյուսիսային համալսարանի և Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի կանոնադրությունները , ուսանողի ուսումնառության պայմանագիրը, քոլեջի զարգացման ծրագիրը, պետական կրթական չափորոշիչները, ուսումնական պլանները:
4. Ուսանողների գիտելիքների ընթացիկ,ամփոփիչ ստուգման, գնահատման կարգը ներքին իրավական ակտ է:
5. Սույն կարգն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

2. Ուսանողների գիտելիքների ընթացիկ , ամփոփիչ ստուգումը, գնահատումը

6..Քոլեջում գործում են ուսանողների գիտելիքների,կարողությունների գնահատման հետևյալ տեսակները.
- ընթացիկ գնահատում, կարողությունների գնահատում /ուսումնառության արդյունքների գնահատում/
- կիսամյակային ամփոփիչ գնահատում,
- տարեկան գնահատում,
- ամփոփիչ գնահատում /ատեստավորում/
- մոդուլի ամփոփում

7. Սովորողների գիտելիքների,կարողությունների ստուգման ընթացիկ,ամփոփիչ գնահատումը նպատակ ունի միջին մասնագիտական կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջների, ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման ու վերահսկման մոտեցումների և մեթոդների հիման վրա լուծելու հետևյալ խնդիրները.
ա/ուսումնական գործունեության արդյունքում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ համակարգված տեղեկատվության հավաքագրումը,
բ/ կրթության որակի բարելավումը և յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանումը, ակտիվացումը, շարունակաբար զարգացումը, կրթության որակի վերահսկումը,
գ/շարունակաբար և ըստ փուլերի սովորողի կողմից պետական չափորոշչով ամրագրված բովանդակային բաղադրիչների յուրացման աստիճանի ստուգումն ու գնահատումը,
դ/ սովորողի անձնային որակների ձևավորումն ու վարքագծի կարգավորմանը նպաստումը,
սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը:
8. Ուսումնառության արդյունքի գնահատման հիմք է ընդունվում ուսանողի աշխատանքի առարկայական արդյունքը՝ <<անցել է>>կամ <<չի անցել>> :

9. Գիտելիքների ստուգումն իրականացվում է նաև միավորային գնահատմամբ:Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն պետական չափորոշչի:
10. Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են 1-ից մինչև 10 ամբողջ թվերով արտահայտվող միավորային սանդղակով: Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման սանդղակը և միավորների բնութագրիչները սահմանվում են ըստ հավելված 1-ի:
Իսկ ամփոփիչ ատեստավորման արդյունքները գրանցվում են 1-20 ամբողջ թվերով արտահայտվող միավորային սանդղակով ըստ հավելված 2-ի:
Միավորային գնահատումն իրականացվում է բանավոր, գրավոր և գործնական եղանակներով:
11. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների գնահատումն իրականացվում է անհատական ուսուցման պլանի հիման վրա (ԱՈՒՊ):

2.1 Ընթացիկ գնահատում

12.Ուսումնառության արդյունքի գնահատումն իրականացվում է գնահատման թերթիկներով (հավելված 3): Գնահատման առաջադրանքները կազմվում են հիմք ընդունելով մոդուլային ուսումնական ծրագրում առաջարկված գնահատման միջոցները: Դասախոսը թերթիկում նշում է <<անցել է>>կամ <<չի անցել >>:Առաջադրանքի կատարման արդյունքը գրանցվում է անցել է,եթե կատարվել է առաջադրանքի առնվազն 85 %-ը:Արդյունքի գնահատում չանցնելու դեպքում իրականացվում է կրկնակի հանձնում:Գնահատման թերթիկը պահապանվում է դեկանատում :
13. Ընթացիկ գնահատումն իրականացվում է դասամատյանում:
14.Տեսական կամ կոմբինացված պարապմունքների մեկ կիսամյակում **բանավոր հարցման** քանակը պետք է լինի համապատասխան տվյալ առարկայի մոդուլի: Պահանջվող հարցումների քանակից քիչ գնահատական լինելու դեպքում , կիսամյակը չի ամփոփվում,նշանակվում է <<չգնահատված>>(չգ) կամ <<չստուգված>>(չստ):
15.Յուրաքանչյուր գործնական պարապմունքին բոլոր ուսանողները գնահատվում են տվյալ պարապմունքի ժամին:
Եթե գործնական պարապմունքից ուսանողը գնահատվել է անբավարար,ապա դասախոսը անբավարար գնահատականը նշանակում է դասամատյանում՝կոտորակով՝համարիչում,իսկ գնահատականի վերահանձնումը կատարվում է ուսումնական մասից տրված ուղեգրով՝ (ուղեգիրը տրվում է անվճար) հաջորդ պարապմունքին,դասախոսի տված հանձնարարություն ներով: Դասախոսը դասամատյանի տվյալ առարկայի էջում կոտորակի հայտարարում նշում է վերահանձնման գնահատականը (օրինակ՝ 2/5):

2.2 Կիսամյակային ամփոփիչ գնահատականի ձևավորումը

22. Յուրաքանչյուր առարկայից կիսամյակը ամփոփվում է ուսումնական պլանով նախատեսված ձևով՝ ստուգարք /ստ./կամ տարբերակված գնահատում կամ ամփոփիչ գնահատում:
23.Ամփոփիչ գնահատականը դասախոսը գրանցում է դասամատյանում ,առարկային հատկացված էջում , ստուգման գրքույկում և տեղեկագրում:

24.Առարկայի կիսամյակը ամփոփվում է <<ստուգված>>,եթե ուսանողը ունի համապատասխան քանակով դրական գնահատականներ:
25.Առարկայի կիսամյակային տարբերակված գնահատականը ձևավորվում է հետևյալ կերպ.

ա/ տեսական պարապմունքի կիսամյակային գնահատում

բ/ գործնական պարապմունքի կիսամյակային գնահատում

գ/կիսամյակային ամփոփիչ գնահատականի ձևավորումը

- եթե տվյալ առարական ունի և՛ տեսական, և՛ գործնական պարապմունքներ, հաշվվում է տեսական պարապմունքի և գործնական պարապմունքի կիսամյակային գնահատականների միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով՝տեսականի էջում՝ առանձին այունակում:
- եթե տեսականի և գործնականի կիսամյակային գնահատականները տարբերվում են 1 միավորով/բացառությամբ լավ և գերազանցի դեպքում/, ապա մոտարկումը կատարվում է հօգուտ ուսանողի:

26. Եթե տեսական կամ գործնական պարապմունքներից որևէ մեկը գնահատված է գերազանց,մյուսը՝ լավ , ապա ընդհանուր գնահատականը ամփոփվում է գերազանց:
27. Եթե գործնական պարապմունքների ժամերի քանակը 20 ժամից պակաս է,ապա առարկայի կիսամյակային գնահատականը ձևավորվում է տեսական և գործնական պարապմունքներից ստացած գնահատականների միջին թվաբանականով և գրանցվում է դասամատյանում:
28. Եթե տեսական կամ գործնական պարապմունքներից որևէ մեկը ամփոփվում է անբավարար, կամ ուսանողը գործնական պարապմունքից ունի չվերահանձնած անբավարար գնահատական , ապա կիսամյակային գնահատականը ամփոփվում է անբավարար:

2.3 Տարեկան /1-ին կուրս/ և ավարտական ամփոփիչ գնահատականի ձևավորումը

31. Եթե տվյալ ուսումնական տարում տվյալ առարկան քննական չէ և ուսումնասիրվում է մեկ կիսամյակում ,ապա տարեկան գնահատական է համարվում կիսամյակային գնահատականը:
32. Եթե տվյալ առարկան ուսումնասիրվում է ուսումնական տարվա I և II կիսամյակներում և քննական չէ,ապա տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով և այն մոտարկվում է ամբողջ թվով: Եթե կիսամյակային գնահատականների տարբերությունը մեկ միավոր է,ապա տարեկան գնահատական է համարվում բարձրը :
33. Եթե քննական առարկան ավարտվում է մեկ կիսամյակում ,քննական գնահատականը համարվում է ամփոփիչ:Օրինակ. կիսամյակային գնահատականը <<6>> է ,իսկ քննական գնահատականը՝ <<7>> ,ավարտական ամփոփիչ գնահատականը կլինի <<7>>:
34. Եթե ուսումնական տարում տվյալ առարկան քննական է,և առաջին կիսամյակում քննություն է, իսկ երկրորդում քննություն չէ,ապա տարեկան գնահատականը ձևավորվում է առաջին կիսամյակի քննական և երկրորդ կիսամյակի կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով և այն մոտարկվում է ամբողջ թվով:

35. Եթե ուսումնական տարում տվյալ առարկան քննական է,և առաջին կիսամյակում քննություն չէ, իսկ երկրորդում քննություն է տարեկան ուսումնասիրած նյութի ամբողջ ծավալով,ապա տարեկան գնահատական է համարվում քննական գնահատականը:

36. Եթե ուսումնական տարում տվյալ առարկան քննական է,և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակներում քննություն է, ապա տարեկան գնահատականը ձևավորվում է առաջին և երկրորդ կիսամյակների քննական գնահատականների միջին թվաբանականով և այն մոտարկվում է ամբողջ թվով: Եթե քննական գնահատականների տարբերությունը մեկ միավոր է,ապա տարեկան գնահատական է համարվում բարձր գնահատականը:

37. Սույն կարգի 33 կետերում նշված դեպքերում,եթե միջինացվող գնահատականներից մեկը լավ է, մյուսը գերազանց ,ապա տարեկան գնահատականը համարվում է գերազանց:

39.Առարկայի ավարտական ամփոփիչ գնահատականը ձևավորվում է ուսումնառության ընթացքում տվյալ առարկայի տարեկան գնահատականների միջին թվաբանականով:

42. Ավարտական ամփոփիչ գնահատականը քննաշրջանի ավարտից հետո ուսումնական մասում անց է կացվում ամփոփիչ տեղեկագիր /հավելված 3 /:

2.4 Մոդուլի ամփոփում

43.Մոդուլն ամփոփում է դասախոսը՝ ուսումնական մասի կողմից կազմված մոդուլի ամփոփման ժամանակացույցին համապատասխան՝ մոդուլի յուրացման գնահատման ամփոփ թերթում (հավելված 4),որտեղ նշվում են մոդուլի բոլոր արդյունքները՝ գնահատման քայլերով և գնահատման արդյունքով, մոդուլի ամփոփման արդյունքը: Մոդուլի յուրացման գնահատման ամփոփ թերթը հանձնվում է ուսումնական մաս:

2.5 Ամփոփիչ ատեստավորում

44. Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի շրջանավարտին, որը ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով տրվում է գերազանցության դիպլոմ:

45. Ուսումնառության ընթացքում ուսանողների կողմից ստացված գնահատականների վերահանձնում:

Պարզաբանում.

- Վերահանձնումների դիմումների հանձնման ժամկետ սահմանել յուրաքանչյուր քննաշրջանի սկիզբ:
- Վերահանձնումների առավելագույն քանակ սահմանել երեք առարկան (մոդուլ)
- Հնարավորություն ընձեռնել ուսանողներին քննությունները վերահանձնել յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, բայց ոչ ավարտական կուրսի վերջին կիսամյակում
- Պրակտիկաների համար վերահանձնում սահմանել ուսումնական տարվա ընթացքում՝ չխաթարելով ուսումնական գործընթացը :

46. Ամփոփիչ ատեստավորմանը չներկայանալու կամ անբավարար գնահատական ստանալու դեպքում ուսանողը կարող է ավարտական կուրսի համար սահմանված վարձավճարի 25 տոկոսի վճարմամբ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը:

Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման սանդղակը և միավորների բնութագրիչները

Բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների գնահատում

1 միավոր – չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:

2 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
3 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
4 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
5 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
6 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
7 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
8 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:
9 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկատվությունը:
10 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկատվությունը:

Հավելված 1

Գնահատման սանդղակը և բնութագրիչները

Միավոր /Գնահատական/	Գնահատման բնութագրիչները
9-10 /Գերազանց/	Գիտելիքների և կարողությունների լիարժեք արդյունք
7-8 /Լավ/	Գիտելիքների և կարողությունների բարձր արդյունք՝ մասնակի թերացումներով
4-5-6 /Բավարար/	Գիտելիքների և կարողությունների ընդունելի մակարդակ՝ զգալի թերացումներով
1-2-3 /Անբավարար/	Գիտելիքների և կարողությունների անընդունելի մակարդակ
4--10 /Ստուգված/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման ընդունելի մակարդակ
1--3 /Չստուգված/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման անընդունելի մակարդակ

Հավելված 2

Գնահատման սանդղակը և բնութագրիչները

Միավոր /Գնահատական/	Գնահատման բնութագրիչները
18-20 /Գերազանց/	Գիտելիքների և կարողությունների լիարժեք արդյունք
14-17 /Լավ/	Գիտելիքների և կարողությունների բարձր արդյունք՝ մասնակի թերացումներով
8-13 /Բավարար/	Գիտելիքների և կարողությունների ընդունելի մակարդակ՝ զգալի թերացումներով
1-7 /Անբավարար/	Գիտելիքների և կարողությունների անընդունելի մակարդակ

Հավելված 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջ

(Ուսումնական հաստատության անվանումը)

(Մասնագիտության անվանումը)

ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

«____» _____ 20 թ.

կայացած նիստի
(_____(ժամը, րոպե) մինչև _____ (ժամը, րոպե)

Ներկա էին.

Նախագահ _____

Նախագահի տեղակալ _____

Անդամներ՝

Ռեկտորի օգնական _____

Քննող դասախոս _____

Դասախոս _____

Քարտուղար _____

Պետական որակավորող հանձնաժողովը որոշում է պետական քննություն հանձնած ուսանողներին նշանակել հետևյալ գնահատականները.

Հ/Հ	Ուսանողի անունը, ազգանունը, հայրանունը	Քննական տոմսի համարը	Գնահատականը (տառերով և թվերով)
1			
2			
3			
4			

5			
6			
7			
8			

Պետական որակավորող հանձնաժողովի
կարծիքը

խագահ _____

խագահի տեղակալ _____

դամներ՝

կտորի օգնական _____

ւոդ դասախոս _____

ւսախոս _____

րտուղար _____

Արձանագրություն N_____

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի 20 թ. _____-ին

կայացած նիստի (ժամը _____ րոպեից մինչև _____ րոպե)

Մասնակցությամբ նախագահ՝

Նախագահի տեղակալ՝

անդամներ՝

<<Ատամնատեխնիկական գործ>> առարկայից պետական քննություն հանձնելու մասին Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի միջին ասնագիտական կրթական ծրագրով <<Ատամնատեխնիկական գործ>> մասնագիտությամբ

Քննվող ուսանող _____

(ազգանուն, անուն , հայրանուն)

ՀԱՐՑԵՐ

1. _____

2. _____

3. _____

4. _____

Ուսանողին տրված հարցերի պատասխանի ընդհանուր բնութագիրը

_____

Գտնել, որ ուսանողը հանձնել է ամփոփիչ ատեստավորում_____գնահատականով

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների մասնավոր կարծիքը

_____

Պետական քննական հանձնաժողովի նախագահ՝ _____

Նախագահի տեղակալ՝ _____

Հանձնաժողովի անդամներ՝ 1. _____

2. _____

Քննող դասախոս՝ _____

Հանձնաժողովի քարտուղար՝ _____

Հավելված 4

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ---------- ԿՈՒՐՍԸ —- ԿԻՍԱՄՅԱԿ —-

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ _____

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ _____

Դասախոս _____-/անուն,ազգանուն / «----» _____20 թ.

N	Ուսանողի ազգանուն անուն	Ստուգ. գրքույկի համարը	Նշումներ ըստ գնահատման փուլերի ուսանողների ձեռքբերումների մասին						Քննողի ստորագր	Պարտքերի մարման շրջան			
										1-ին փուլ, ամսթ.——————		2-րդ փուլ, ամսթ.——————	
			1	2	3	4	5	Ամփոփ		ամփոփ	քննողի ստորագր	ամփոփ	քննողի ստորագր
1													
2													
3													
4													
5													
6													
7													
8													

Քոլեջի տնօրեն՝